



ՉԱՅԻ ՔԱՂԱՅՐԱՅ



صوت المجتمع

Ամսական հրատարակություն ՓՈԼԱ ԵԱԳՈՒՂԵԱՆԻ
Երեսփոխանական Գրասենեակի - Հայկական Բաժանմունք
ՄԱՅԻՍ 2019, Ա. Տարի, Թիւ 3

Armenian monthly, free of charge

جريدة أرمنية ، شهرية ، مجانية



paula.armeniansection@hotmail.com



Paula Yacoubian Փոլա Եագուպեան



Beirut - Ashrafieh - Independance st.
Hawi building - Ground floor

بيروت أشرفية - شارع الاستقلال

بناية حاوي - طبق ارضي



78/901837

Խմբագրական

ՈՒ ԱԶԳ ՄԸ ԱՄԲՈՂԶ ԽԵՆԹԱՑԱԻ



«Երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար»...:

Ու ազգ մը ամբողջ խենթացաւ, որովհետեւ անդառնալիօրէն պիտի վճռուէր իր «լինել-չլինելու», պատմութեան թատերաբեմէն ի սպառ կորչելու կամ գոյատեւելու ու վերապրելու խնդիրը:

Ազգի մը պատմութեան մէջ կան վճռական պահեր, երբ ան իր զինուորով, կղերով, մտաւորականով ու գիտնականով, հողագործով, արհեստավորով ու բանուորով, ուսանողով ու աշակերտով, չափահասով ու անչափահասով, իր ամբողջութիւնը կազմող բոլոր խաւերով ու անհատներով, պէտք է անհամաչափ խենթանայ, որպէսզի իր գոյութեան սպառնացող բոլոր անագորոյն թշնամիները սարսափահար խենթացնէ:

Եւ որովհետեւ ազգերու պատմութեան ամենապանծալի ու ամենաուսանելի դրուագները անոր սրբազան խենթութեամբ գրուած էջերուն մէջ պարփակուած են, ՍԱՐԴԱՐԱՊԱՏՏԸ կարելի է իրաւամբ համարել մեր ազգի նորագոյն պատմութեան սրբազնագոյն խենթութիւնը:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏՏԸ՝ ո՛չ միայն փրկեց ազգը, պահպանեց հայրենի տարածքի վերջին հողակտորը, այլեւ ստեղծեց պետութիւն, վերականգնեց դարերով կորսուած պետականութիւնը եւ ամրագրեց ազգերու եւ քաղաքակրթութիւններու պատմութեան մէջ մեր արժանավայել ներկայութեան յաւիտենականութիւնը:

Եթէ մեր ազգի Սարդարապատեան խենթութիւնը միայն քանի մը օր չտեւէր, այլ քանի մը տարի շարունակուէր, եւ մենք ազգի բովանդակ ներուժի գերագոյն լարումով դեռ որոշ ժամանակ կարողանայինք առկայծ պահել այդ խենթութիւնը, թերեւս այսօր աւելի մեծ հողատարածքով Հայաստան մը ունենայինք աշխարհի քարտեզին վրայ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏՏԸ պետութիւն ստեղծեց, բայց պետութիւնը ՍԱՐԴԱՐԱՊԱՏՏԵԱՆ չդարձաւ:

Հնարաւոր էր՝ այո՛, եթէ մեր սեփական ուժին նկատմամբ անվերապահ հաւատք տածէինք, չտատամսէինք ու չտարակուսէինք, մանաւանդ՝ մենք զմեզ չգրադեցնէինք երկրորդական ու երրորդական նշանակութեան խնդիրներով ու իշխանատենչական մոլուցքներով:

Պայմանները ձեռնտո՞ւ էին՝ մասամբ, մանաւանդ՝ օսմանեան պետութեան անձնատուութեան վաղորդայնին, երբ տակաւին սաղմնային էր քեմալական շարժումը:

Բացարձակապէս համազգային կարողութիւններուն ապաւինելով՝ հողահաւաքը սահմանեցի՛նք որպէս մեր նորաստեղծ պետութեան ամենագլխաւոր եւ անյետաձգելի ռազմավարական նպատակը: Ո՛՞ջ:

Կրցա՛նք պահել հողը: Ո՛՞ջ:

Պատմութեան մէջ պահեր կան, որոնք տասնամեակներ արժեն՝ ժամանակահատուածներ՝ որոնք դարեր արժեն:

Որպէսզի հաշուառելի ուժ նկատուիս, պէտք է յաշս թշնամիներուդ, մանաւանդ յաշս բարեկամներուդ, ցանկացած իրադրութեան մէջ ապացուցես սեփական ներուժի վրայ խարսխուած ուժականութիւնդ, անշրջանցելի եւ անարհամարելի գործօնի արժէքդ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏՏԸ փաստեց, որ մենք կարողութիւնը ունինք դրսեւորել, ե՛ւ ուժականութիւն ե՛ւ անշրջանցելի գործօնի դերակատարութիւն:

Իրավիճակի յետագայ զարգացումներու ընթացքին մենք համարժէք վերաբերմունք չցուցաբերեցինք եւ կորսնցուցինք պատմական առիթը:

Այսօր, որեւէ ժամանակէ աւելի պէտք է վերիմաստաւորենք եւ վերաբեւոյրենք ՍԱՐԴԱՐԱՊԱՏՏԻ դարադարձիկ իմաստը մեր պատմութեան համար եւ օրինակ քաղենք անոր պատգամներէն, որպէսզի մեր վաղուան օրը կառուցենք ՍԱՐԴԱՐԱՊԱՏՏԻ ոգիով:

«ԶԱՅՆ ԲԱԶՄԱՑ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝ ԶՕՐԱՎԱՐ ՆԱՐԵԿ ԱՔՐԱՀԱՄԵԱՆԻ ՀԵՏ

Զօրավար Նարեկ Աբրահամեան ծանօթ անուն մըն է լիբանանեան եւ հայկական ռազմաքաղաքական թատերաբեմերու վրայ իր ունեցած դերակատարութեամբ եւ յայտնի կամ ոչ յայտնի գործունէութեամբ: Իր կուտակած փորձով եւ գիտելիքներով, միշտ շահեկան է լսել ամենատարբեր խնդիրներուն վերաբերեալ իր արտայայտած տեսակետները, դիտարկումները եւ գնահատականները:

– Յարգարժան զօրավար, նախ կ'ուզենք մեր շնորհակալութիւնը յայտնել «Զայն Բազմաց»ի հարցումներուն պատասխանելու ձեռնարկէրէն յետոյ յայտարարեալ իր անհրաժեշտութեան համար:

Մեր առաջին հարցումը կը վերաբերի Լիբանանի հայ համայնքի ներկայ իրավիճակին: Ծանօթ ըլլալով ռազմական վաստակին առնչութեամբ Ձեր քաղաքական-հասարակական գործունէութեան, կը փափաքինք տեղեկանալ, համայնքի քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային, միով բանիւ կենսագործութեան բոլոր բնագաւառները ընդգրկող ոլորտներուն վերաբերեալ Ձեր դիտարկումներուն եւ գնահատականներուն մասին:

– Ձեր հարցումին մէջ յիշուած բոլոր բնագաւառները, (քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային եւ հոգեբարոյական), հայ համայնքին ներսէն ընթացող եւ տարբեր տարողութեան տեղատուութեան եւ կամ անկումի:

Այսինքն համայնքի այսօրուան պատկերը շատ տխուր երեւոյթ մը ստացած է: Ազգային այսպէս կոչուած իշխանութիւնները, վատառողջ վիճակի մէջ են, եւ ինչպէս որ բոլորս գիտենք, ականատես ենք անոնց անարդիւնաւէտ գործունէութեան:

Բնականաբար այս տխուր եւ անառողջ կառավարումը պատճառ հանդիսացած է համայնքի դիմադրողականութեան տկարացման: Հետեւաբար՝ երբ մարմնի մը դիմադրողականութիւնը կը տկարանայ, այդ մարմինը շատ արագ կ'ազդուի մանրէներու եւ ժահրերու ներկայութենէն ու շուտով կ'ընկճուի ու կը մահանայ:

Լիբանանեան հայրենիքի այսօրուան վիճակը շատ ծանր է թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական առումներով, որուն հիմնական պատճառը երկրին դէպք իրենց ձեռքերուն մէջ առած խմբաւորումներն են, որոնք իրենց շահամոլութեամբ եւ բարոյական փտածութեամբ երկիրը հասցուցած են անդունդի եզրին:

Այս փտածութեամբ ներծծուած մթնոլորտին մէջ, հայ համայնքն ալ ենթարկուած է զանազան տեսակի ժխտական ազդեցութիւններու:

Զօրավար Նարեկ Աբրահամեանի ռազմական ծառայութեան կենսագրութիւնը

- 1973-76 ռազմական ակադեմիա:
- 1977-78 Սեպտեմբեր՝ Դասակի հրամանատար:
- 1978-83 Նոյեմբեր՝ Վաշտի հրամանատար ներառեալ յատուկ գործողութիւններու առանձնայատուկ վաշտեր:
- 1984-90 Օդագործական 102-րդ գումարտակի հրամանատար:
- 1990-94 Լիբանանեան բանակի յատուկ գործողութիւններու (մաղադիր) գունդի հրամանատար:
- 1994-95 ԱՄՆ հրամանատարական եւ ընդհանուր շտապի դասընթացքներ:
- 1995-97 գումարտակի շտապի 1,3 եւ PR բաժիններու պատասխանատու:
- 1998 Յունուար 9-էն թոշակաւոր:

Մարտարուեստի դասընթացքներ

- 1980 ԱՄՆ (IOBC)
- 1987 ԱՄՆ (IOAC)
- 1994-95 ՍՄՆ (CGSC)
- Ստացած է մարտական եւ ծառայողական բազմաթիւ մետալներ եւ գնահատական գիրքեր:
- 1998-ին Նախաձեռնած է Հայաստանի սահմանամերձ շրջաններու բնակեցման ծրագիր մը՝ ծանօթ իբրեւ Դից Մայրի:
- 1998 Մայիսէն մինչեւ 2000 Մայիս եղած ՀՀ ՊՆ-ի մարտական պատրաստութեան գծով փոխ Նախարարի խորհրդատու:
- Արցախեան ազատագրական պայքարի զանազան գործունէութիւններուն մէջ ունեցած է աշխոյժ դերակատարութիւն:



Մթնոլորտէն օգտուած անձեր, զանազան ոչ ազնիւ ձեւերով եւ ճամբաներով իրենց ձեռքերուն մէջ առած են ազգային իշխանութիւնները եւ յարմար առիթը գտնելով թաղուած են իրենց իշխանատենչ եւ նիւթապաշտ կիրքերը եւ ազահոթիւնը գոհացնելու տիղմին մէջ: Պատուհասներու շարքը, թէ լիբանանեան եւ թէ՛ հայկական հարթակներուն վրայ սկսած են կուտակուիլ եւ անոնց հասցուցած ու դեռ հասցնելիք վնասները անխուսափելիօրէն երեւան պիտի գան մօտիկ ապագային:

Այսօր մենք հսկայական աշխատանքի կարիքը ունինք, կասեցնելու համար նախ համայնքի թաւալգոր անկումը, ապա՝ եթէ կարողութիւնը ունենանք, օգտակար ըլլալու ընդհանուր իրավիճակի բարելաւմանը:

Գալով լիբանանեան հայրենիքի ռազմական եւ քաղաքական դերակատարութեան հարցին, կրնամ ըսել, որ անկախ ու ինքնիշխան որոշումի կարողութիւնը ի սպառ կը բացակայի մեզմէ, եւ որպէս պետութիւն եւ պետականութիւն՝ հետեւողի եւ կցորդի աննախանձելի վիճակին մէջ կը գտնուինք: Ընտրուած ռազմավարական նպատակները եւ կողմնորոշումները երկրին համար նպաստաւոր չեն, մանաւանդ՝ մեր համայնքին եւ անոր նման համեմատաբար փոքրաթիւ համայնքներուն համար:

Մեր համոզումով՝ կեդրոնաձիգ եւ զօրաւոր պետականութիւնը, համայնքներու առողջ գոյակցութեան ու զարգացման միակ գրաւականն է, եւ այս հրամայականը աւելի քան կենսական է, մանաւանդ փոքրաթիւ համայնքներուն համար: Գերիշխան եւ ինքնիշխան պետութիւնը՝ ուր սահմանադրութիւնը, օրէնքը, կարգ ու կանոնը գերիվեր են բոլոր հաստատական շահերէն ու նկատառումներէն եւ կը յարգուին առանց պայմանի, մեր գոյութիւնը, յարատեւումը եւ բարգաւաճումը երաշխաւորող միակ ապաւենը կրնայ հանդիսանալ:

Հայր՝ որպէս խաղաղասէր, կարգ ու կանոն սիրող, աշխատասէր եւ ստեղծագործ հաւաքականութիւն, միայն գերիշխան պետութեան հովանիին տակ կրնայ ստեղծագործել ու յառաջդիմել:

Այս ընտրութիւնը դժբախտաբար չեղաւ ազգային իշխանութիւններու կիզակէտը: Փտածութիւնը եւ անիշխանութիւնը յարմար գտնելով, այսօրուան պատասխանատուները պարարտ հող ստեղծեցին կործանարար երեւոյթներու յառաջացման եւ խորացման համար, եւ նպաստաւորութեամբ այդ մթնոլորտէն, տարուեցան սեփական ազահոթեան եւ փառատենչութեան յագուրդ տալու մոլուցքով:

– Աւելի քան տասնամեակ մը առաջ, դուք այլոց հետ նախաձեռնեցիք քաղաքական շարժման մը հիմնադրումին, որ որոշ ժամանակ Լիբանանի հայ համայնքին մէջ ծաւալեց աշխոյժ գործունէութիւն: Ի՞նչ էր այդ շարժման ստեղծման տուն տուող պատճառը կամ պատճառները, տեսչականը, հետապնդած նպատակն ու առաջադրած խնդիրները: Ի՞նչ վերաբերմունքի արժանացաւ, թէ՛ հայ հասարակութեան եւ թէ՛ աւանդական կուսակցութիւններուն կողմէ, եւ ինչո՞ւ չունեցաւ շարունակութիւն:

Հաշուի առնելով մեր նախորդ պատասխանին մէջ մատնանշուած հանգամանքները, այսինքն լիբանանեան ռազմավարական եւ քաղաքական խառնաշփոթ իրավիճակները եւ ելակէտ ունենալով Լիբանանի հայ համայնքի վատառողջ վիճակը, մեզի համար յստակ

Ճարունակում էջ 2-էն

էր, որ ստեղծուած կացութեան մէջ պատասխանատուութեան մեծ բաժինը կ'իյնար ազգային կառոյցներու ուսերուն:

Անոնց պատասխանատուներու տկար, անձնասէր, փառամոլ, նիւթապաշտ եւ բարոյական ու ազգային արժէքներէն հեռու նկարագիրները կը սպառնային համայնքի գոյատեւման, բարգաւաճման եւ հզօրացման: Իսկ որովհետեւ այդ ջլատիչ երեւոյթը տարածուած էր գրեթէ բոլոր կուսակցութիւններուն, միութիւններուն եւ այլ հաւաքականութիւններուն մէջ, հարկ էր նոր տեսլականի մը շուրջ հաւաքուիլ, որով հնարաւոր ըլլար թէ լիբանանեան հայրենիքին եւ թէ՛ հայ համայնքի կայունութեան, զարգացման եւ բարգաւաճման օժանդակել:

Այդ նպատակով մենք սկսանք շարժումի մը, փորձելով դրական ցնցում յառաջացնել առկայ կացութեան մէջ: Բնականաբար, շարժումը ինչպէս անցեալի, ներկայի եւ ապագայի բոլոր նման շարժումները, կուսակցութիւնները կամ հաւաքականութիւնները կարիքը ունէին մարդկային, նիւթաբարոյական եւ քաղաքական նեցուկի:

Քաղաքական օժանդակութիւն ստանալու դիմաց մեր դաշնակիցներու առաջադրած անընդունելի պայմանները, առաւել այլոց տրամադրուած լայնածաւալ եւ անսահմանափակ օժանդակութեան դիմաց, մեզի հայթայթուած չնչին, ոչ-հետեւողական եւ ոչ-երկարաժամկէտ օժանդակութիւնը, մեր շարժման գոյատեւմանը չնպաստեցին:

Բոլոր կուսակցութիւնները կամ շարժումները, իրենց ստեղծման սկզբնական փուլին ունեցած են օժանդակութիւններ տարբեր աղբիւրներէ, ինչպէս նաեւ ունեցած են դժուարութիւններ տեսլականի, ծրագրի եւ կանոնագրի յստակեցման ու բանաձեւման առումով: Մեր նախաձեռնած շարժումն ալ անմասն չմնաց նմանատիպ տկարութիւններէ:

Այդուհանդերձ՝ սկզբունքային զիջումներու հաշտոյն գոյատեւելու գաղափարը մեզի համար անընդունելի էր, ինչպէս եղած էր պարագան այլ կուսակցութիւններու եւ միութիւններու: Հակառակ մեր սկզբնական յաջողութիւններուն եւ այլամերժ, քարացած մտածողութեամբ եւ անձնական, նիւթական շահերով առաջնորդուող ազգային կառոյցներու՝ մենատիրական իշխանութեամբ պայմանաւորուած, գործնականօրէն անհնար եղաւ շարժումը պահել առանց դաշնակից ուժերու կողմէ տրամադրուելիք օժանդակութեանց: Հետեւաբար, ստեղծուած ոչ-բարենպաստ հանգամանքներու բերումով, դադրեցուցինք շարժման յետագայ գործունէութիւնը: Բնականաբար, այդ ընթացքին՝ ազատ մտածող մարդիկ, որոնք կը մերժէին ենթարկուիլ ճնշումներու, կեղեքումներու եւ սպառնալիքներու, իրենց ազատ կամքով համալրեցին անոր շարքերը, իսկ շատ-շատեր ոչ բացայայտ կերպով համակրեցան անոր, իսկ ուրիշներ բաժնէլով հանդերձ առաջադրուած գաղափարները եւ սկզբունքները, «ինձ գլխացաւ պէտք չէ»-ի հոգեբանութեամբ հեռու մնացին շարժումէն:



Յամենայնդէպ՝ շարժման երեւոյթի եզակիութիւնը ակնյայտ իրողութիւն հանդիսացաւ մեր հասարակութեան համար: Փոխանակ ներքին կարգով փոփոխութիւն ստիպելու, քայլ մը առնուեցաւ, որ Shock therapy-ի երեւոյթի վերածուեցաւ եւ անգամ մը եւս ապացուցեց, որ քաղաքական ազատութիւնները մեր համայնքին մէջ ճնշուած են, իսկ մարդու արժանապատուութիւնը՝ արհամարհուած ու ոտնահարուած:

– Արցախեան ազատամարտին մէջ Ձեր ունեցած ներդրումին մասին թերեւս սակաւաթիւ անձեր գիտեն, բայց լատաւեղեակները շատ լաւ գիտեն այդ մասնակցութեան բնոյթին եւ ծաւալին մասին, զոր որքանով մենք տեղեակ ենք, տարբեր ձեւերով եւ միջոցներով ցարդ



անընդմէջ կը շարունակուի: Որպէս այս խնդիրին անմիջականօրէն առնչուած եւ անոր յետին մանրամասնութիւններուն ծանօթ ռազմաքաղաքական փորձառու գործիչ, ինչպէ՛ս կը գնահատէք արցախեան հիմնահարցին շուրջ ստեղծուած ներկայ իրավիճակը, եւ միջազգային հարթակին վրայ ռազմական յաղթանակի իրաւաքաղաքական ամրագրումը ապահովելու համար, ի՞նչ միջոցներու գործադրումը կը համարէք հրամայական:

Անշուշտ երբ երկիրներու, ազգերու եւ ժողովուրդներու ռազմաքաղաքական վիճակներուն մասին խօսինք, առաջին հերթին նկատի պէտք է ունենանք տուեալ երկրի աշխարհագրական դիրքը եւ անոր փոխարաբերութիւնները եւ փոխկապուածութիւնը միջազգային եւ տարածաշրջանային ազդեցութիւն ունեցող ուժային կեդրոններուն հետ:

Հայաստանը մոլորակի վրայ գոյութիւն ունեցող միակ երկիրը չէ: Հայ ժողովուրդի պատմական ծննդավայրը եւ ընդհանրապէս Միջին Արեւելքը եղած են տարածաշրջանային եւ միջազգային ուժերու թիրախ, անոնց շահերու բախման կամ փոխլրացման տարածք եւ քաղաքակրթութիւններու ստեղծման, շփման ու փոխազդեցութեան միջավայր:

Պարթեւները, Յոյները, Հռովմէացիները, Բիւզանդացիները, Պարսիկները, Արաբները, Սելճուքները, Սոնկոլները, Թաթարները, բոլորին կողմէ Հայաստանը ենթարկուած էր արշաւանքներու, եւ ի վերջոյ ինկած Օսմանեան եւ Իրանեան լուծերուն, ապա Օսման-Թրքական եւ Յարական-Սովետական Ռուսաստանի տիրապետութեան տակ:

Այդ դարերու վրայ երկարած վիճակը բնականաբար ազդած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի աշխարհագրական, ժողովրդագրական, մշակութային, բարոյահոգեբանական եւ ազգային կենսագործման բոլոր բնագաւառներուն վրայ, զանոնք ենթարկելով հիմնական փոփոխութիւններու եւ ձեւափոխումներու:

Մակայն՝ 1915 թուականէն սկսեալ գործադրուած ցեղասպանութիւնը խորքային, արմատական եւ էապէս վտանգաւոր փոփոխութեան ենթարկեց հայ ազգի ցեղային իւրայատկութիւնները, իսկ անոր բնօրրան հայրենիքի կորուստով ծայր առած հողին պատկանելու գիտակցութենէն եւ զգացողութենէն՝ հայ զանգուածներու քայլ առ քայլ օտարացումը, կը շարունակուի մինչեւ այսօր:

Ստեղծուած պատմական իրադրութիւնը ցոյց կու տայ, թէ տարածաշրջանային եւ միջազգային ուժերու շահերը եւ դերակատարութիւնները ինչպիսի վճռական ազդեցութիւն կրնան ունենալ ժողովուրդներու եւ երկիրներու ապագային վրայ:

Երբ այդ ուժերու շահերը հակադրուին եւ կամ համընկնին, սահմանուած ազգային ռազմավարութիւնն է միայն, որ հնարաւորութիւն կու տայ առաւելագոյնս օգտուիլ եւ կամ նուազագոյնս վնասուիլ իրադարձութիւններու տարաբնոյթ զարգացումներէն:

Հայաստանի եւ հայութեան գերագոյն շահերը ապահովելու համար, յիշեալ գործօններու ներկայութիւնը անհրաժեշտութիւն է, ուստի առաջնահերթութեամբ նշենք ազգային անվտանգութեան սպառնացող մարտահրաւերները:

1) Առկայ նիւթապաշտութիւնը եւ բարոյահոգեբանական փտածութիւնը գորս շէշտուած է վերնախաւին մօտ:

Տկար տնտեսութիւնը, ընկճուած հոգեբանութիւնը, բարբերու այլաւերումը, ազգային արժեհամակարգի խաթարումը, հայրենասի-

Ճարունակում էջ 3-Էն

րութենէ եւ ազգասիրութենէ զուրկ փառամոլ եւ նիւթապաշտ փտած ղեկավարները, այս բոլորը կը տկարացնեն հայութեան դիմադրողականութիւնը:

2) Ազգաբնակչութեան թիւը, որ անմիջականօրէն առնչուած է առաջին մարտահրաւերին: Թուաքանակը կապահովէ աշխատող ուժ եւ պաշտպանութեան համար խիստ հարկաւոր մարդուժ:

Այս երկուքը հիմնական ազդակներն են մեր դիմադրողականութիւնը զօրացնելու եւ բազմաթիւ մարտահրաւերները դիմագրաւելու համար:

Հոս կ'ուզեմ շեշտել, թէ հայութեան կարողականութիւնը եթէ առաւելագոյնս եւ նպատակային օգտագործուի, մենք կարող կրկինք շատ արագ վերականգնելու եւ հզօրանալու բազում բնագաւառներէն ներս:

Գալով Արցախին՝ այն Հայաստանի անբաժան տարածքներէն մէկն է, եւ հայութեան ենթագիտակցութեան մէջ արմատացած է որպէս ամբողջական Հայաստանի անբաժան մասնիկ:

Միջազգային դիւանագիտութիւնը հանգուցալուծման տարբերակներու մասին կրնայ խօսիլ ու բանակցիլ ինչքան կամենայ, սակայն, հակամարտութեան երկուստեք ընդունելի լուծման տարածք մը գտնելու համար, անոնք պէտք է հակամարտ կողմերու պայմանները ու շահերը հասարակ յայտարարի բերեն, որ շատ դժուար եւ գրեթէ անկարելի իրագործում մըն է:

Ըստ համոզումներուս, Արցախի հիմնահարցը կը լուծուի միայն ուժով եւ ժամանակի գործօնի ճիշդ օգտագործմամբ: Յաղթողը կը պարտադրէ լուծումներ, իսկ մեզի համար պարտութիւնը տարբերակ չէ՝ եւ չի՝ կրնար ըլլալ: Յաղթանակ կամ ջարդ ու աղէտ, այս է Արցախեան հիմնահարցի ուղենշային նշանակութիւնը՝ մեր ազգի գոյութեան, գոյատեւման եւ հզօրացման համար:



Արցախ, Մարտակերտ ձախէն՝ Սուրիկ, Բեկոր, Նարեկ, Ռուբո, (Յուլիս 1992)

Այս պատճառաւ, Արցախի ճակատագիրը կ'որոշէ Հայաստանի եւ Արցախի հայութիւնը, որոնք իրենց գաւակներու արեւմբ պահեցին, կը պահեն ու պիտի պահեն հողը: Միայն հանրաքուէի միջոցաւ արձանագրուելիք անոնց կամարտայայտութիւնը, կրնայ որոշել առաջարկուելիք հնարաւոր լուծման ընդունելիութիւնը: Բսկ Սփիւռքի հայերուն կը մնայ կարելի ամէն միջոցներով անսակարկ օգնել, յաղթանակը պահելու, խորացնելու եւ յաւերժացնելու համար:

Միշտ պատրաստ պէտք է ըլլալ պատերազմի, եւ միշտ պէտք է յաղթել ու ազատագրել, ապա ազատագրուած պապենական հողերը բնակեցնել եւ շէնցնել, որպէսզի կարենանք գոյատեւել եւ հզօրանալ:

Եւ այդ ճամբուն վրայ արգելքները պէտք է վերացնել, սկսելով ներքին տակաւնքներէն:

– Ծուրջ տարի մը առաջ, համաժողովրդային, ոչ բռնի, ժողովրդավարական գործելակերպով, կարելի եղաւ Հայաստանի մէջ տիրող անյուսալի իրավիճակը յեղաշրջել, եւ անոր բազմակողմանի զարգացումը կաշկանդող յոռի երեւոյթներու վերացման միջոցաւ, երկիրը զետեղել լուսաւոր ապագայ երաշխաւորող ստեղծագործ վերակերտման ճանապարհին վրայ:

Որպէս Հայաստանի եւ հայութեան խնդիրներով ապրող եւ մտահոգուող գործիչ, ինչպէ՞ս կը գնահատէք ներկայ իրավիճակը եւ ինչպէ՞ս կը դիտարկէք նոր իշխանութիւններուն վարած արտաքին եւ ներքին քաղաքականութեան սկզբունքները եւ ուղղութիւնները:

– Ինչպէս նախորդ պատասխանիս մէջ նշեցի, մեր ազգային անվտանգութեան սպառնացող երկու հիմնական սպառնալիքներէն առաջինը՝ Հայաստանի պետական այրերու մօտ ազգային ու բարոյական արժէքներու անսահման խաթարումն է, նոյնիսկ՝ ի սպառ

բացակայումը: Անոնց հոգեմտաւոր ընկալումներէն վերացած են մարդկային նկարագրի վեհ գիծերը եւ նիւթականը դարձած է գերակշռող՝ ազգի շահերուն, հայրենիքի ապագային ու համամարդկային արժէքներուն նկատմամբ:

Քրիստոս ըսաւ՝ երկու տիրոջ չէք կրնար ծառայել: Աստուծոյ՝ այսինքն հոգիին, եւ դրամին՝ այսինքն նիւթին: Բսկ հոգիին մէջ կ'ընդգրկուի հայրենիքը եւ ազգը:

Հայ ղեկավարներուն համար դրամը՝ նիւթը, եղած է առաջնահերթութիւն, հոգ չէ թէ մեր հայրենակիցները հարիւր հազարներով լքեն հայրենիքը, ամայացնելով հայոց աշխարհը:

Ուրեմն՝ ինձի համար ստեղծուած վիճակէն դուրս գալու, այսինքն անյետաձգելի պայման դարձած իշխանափոխութեան համար կար լուծման երկու տարբերակ. կա՞մ արդար ընտրութիւններ եւ կա՞մ յեղափոխութիւն:

Հայաստանի քաղաքացին ընտրեց երկրորդը, եւ անարին թաւշեայ յեղափոխութեամբ կատարեց յաջող իշխանափոխութիւն:

Այս քայլը, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ ի սփիւռս աշխարհի հայութիւնը տոգորեց ապագայի վառ յոյսերով, եւ ինչպէս շատեր, ինձ ալ համակեց վերականգնումի եւ վերագարթօնքի տեսլականով:

Այսուհանդերձ՝ յորդորս է հայրենի ներկայ իշխանութիւններուն, որ որդեգրուած գործելաոճի եւ յայտարարուած նպատակներուն եւ առաջնահերթութիւններուն վերաբերեալ ըլլան առաւելագոյնս զգոյշ եւ շրջահայեաց, մանաւանդ անցումային այս ժամանակահատուածին, եւ իրենց կառավարման արդիւնաւետութիւնը յաչս հասարակութեան ամրագրեն՝ շօշափելի, տեսանելի եւ չափելի արդիւնքներով:



Որպէս հուսկ բանք՝ «Զայն Բազմաց»ը կը հրապարակէ զօրավար Նարեկ Աբրահամեանին մասին, Թալին Կարապետեանի դիմատետրի բազմանշանակ գրառումը:



Թալին Կարապետյան

November 18, 2017

Վերջին 4 տասնամյակների սփյուռքահայ արժանավոր դեմքերից ամենից պատվավոր տեղը գրավում է Կեներալ ՆԱ:

ՆԱ տիպար այն հայն է, որ ծառայել է անսակարկ հայ հավաքականության շահերին, մոռանալով իր անձնական «Ես»ը ու հաճախ վտանգի մատնելով իր անձը: ՆԱ եղել է այնտեղ ուր կարիքն է զգացվել հանդուգն և անձնուրաց մարդու և ղեկավարի, բանակային թե քաղաքային զույգ ըմբռնումներով:

Իսկական հեղափոխական խառնվածքի տեր, անարդարության դեմ անզիջող ըմբոստ, և իր սեփական շահերը զոհելու աստիճան խղճի ու տրամաբանության տեր Մարդ, որի սակայն ներկայությունը անմիտ ու շահամոլ շրջանակների մեջ դժվար ընդունելի կարող էր լինել, որ արդյունք նա պիտի լքեր իր պաշտած գաղափարի դպրոցը և քայլեր միայնակ, բայց զուլիսը միշտ բարձր:

Փոքր տարիքից ունեցել է առաջնորդ մարդու խառնվածք, այդպես վկայություններ կտան նրան մօտիկից ճանաչողները, տկարին միշտ պաշտպան և անարդարին դեմ անվախ բռնուցք պարզող: Լիբանանյան բանակից ներս նրա ծառայությունը ողջ հերոսապատում մըն է եղել, որի մասին մինչև օրս շատեր վկայում են, բայց մանավանդ ամենից ավելի խոսող վկան՝ նրա ոտի վերքերն են:

ՆԱ իր ռազմագետի հերոսական ծառայություններից օգտվել է ԵՒ Մայր Զայրենիքը ԵՒ Արցախը՝ պատերազմի թեժ տարիներին, ու ապա Մայր Զայրենիքից անբաժան Ջավախքը... ուր եղել է կարիքը հայ հանդուգն ղեկավարի, այնտեղ իր բարձրարժեք ներկայությունը դրոշմել է ՆԱ: Բազմահազար հայեր շատ լավ ծանոթ են նրա բարձր արժեքներին ու խոնարհ խառնվածքին, ուստի շահամոլների սովոր թվի մը կրքերին դժվար որ հաջողվի կեղտոտել նրա դիմագիծը, ինչքան էլ բարձր հնչողություն ունենան այդ պարսավանքները: ՆԱ կմնա բարձր ճախրող արծիվ, և սողունների թույնը ոչ մի ձևով վնաս չի հասցնի նրան:

Իմ խոնարհ վկայությունը այս գրությամբ իրա մասին, ուզեցի տալ առանց բացահայտելու իր իսկական անունը, չվիրավորելու համար իր զգացումները, քաջ իմանալով, որ ՆԱ կմնա միշտ արևու նման շողացող դեմք հայկական սփյուռքի բովից ծնած, որ սակայն կարողացավ իր փայլը ուժեղացնել երբ անցնելով սփյուռքի սահմանները, ծառայության մեջ մտաւ ի սպաս Մայր Զայրենիքի:

Հայկական իրականության մեջ նման անձնավորություններ ճիշդ չէ որ մնան միայնակ ապրող գայլեր, հետևելու ենք նրանց՝ վստահ լինելով որ ՆԱի նմանների քայլերն են, որ մեզ պիտի առաջնորդեն դեպի ազգի ապագան պայծառացնող հաղթանակներ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ - ԶԵՌՆԱՐԿՆԵՐ - ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Լիբանանի ընտրական գործընթացներուն ուշադիր հետեւող իւրաքանչիւր դիտորդ պիտի նկատէ, որ ընտրացուցակներու արձանագրութիւններուն մէջ, քաղաքացիներու որոշ խմբաւորման մը տրուած է Լիբանանի իսրայէլացիներու համայնք անուանումը:

Մեր ընկալումով, սոյն նշումը պէտք է փոփոխութիւն կրէ, եւ յետ այսու տուեալ համայնքը բնորոշուի որպէս Լիբանանի հրեական համայնք, մանաւանդ, որ Լիբանանի սահմանադրութիւնը իր իններորդ յօդուածով շատ յստակ սահմանած է, որ իւրաքանչիւր քաղաքացի կը վայելէ հաւատքի եւ պաշտամունքի բացարձակ ազատութիւն:

Տասնամեակներու ընթացքին արմատացած սոյն սխալը սրբագրելու նպատակով, ներկայացուցի օրէնքի նախագիծ մը, որ կը նախատեսէ պետական բոլոր գերատեսչութիւններու գործառնութեանց մէջ, «իսրայէլեան համայնք» բնորոշումը փոխել հրեական համայնք անուանումով:

Փոփոխութեան անհրաժեշտութիւնը հիմնաւորող փաստարկներէն գլխաւորը այն է, որ Լիբանանի մէջ գործող օրէնքը, ազդուած ըլլալով ֆրանսական օրէնադրական սահմանումէն եւ կարգաւորումէն, թարգմանական շփոթի եւ անյստակութեան պատճառով, հրեական համայնքը հասկացութիւնը թարգմանած է իսրայէլեան համայնք հասկացութեան, յառաջացնելով անախորժութիւն եւ թիւր պատկերացում տուեալ համայնքի նկատմամբ, յատկապէս՝ որ Իսրայէլ հասկացութիւնը քաղաքական - քաղաքացիական պատկանելիութիւն կամ արեւելում ենթադրող պատկերացում է, որ կ'արտացոլէ սիոնական համոզումներու եւ նպատակներու հակում ունենալու իրողութիւն մը, իսկ հրեայ հասկացութիւնը՝ կրօնական է եւ կը բնորոշէ երկնային երեք կրօններէն մէկուն պատկանելիութիւն մը, որոնք հիմնովին տարբեր են, եւ պարտադիր պէտք է իրարմէ տարանջատել:

12 Ապրիլ 2019



13 Ապրիլ 1975, տխուր եւ մոռացութեան արժանի թուական մը Լիբանանի պատմութեան մէջ:

Այդ օր բռնկեցաւ քաղաքացիական պատերազմը, որ մօտաւորապէս 17 տարի անընդմէջ, կործանեց եւ քարուքանդ ըրաւ մարդը, երկիրը, տնտեսութիւնը, հասարակութիւնը, համայնքներու եւ կրօններու միջեւ համերաշխ ու խաղաղ համակեցութեան օրինակը, որ Լիբանանը դարձուցած էր մատնանշման ենթակայ օրինակելի երկիր մը, թէ՛ տարածաշրջանի, թէ՛ համաշխարհին մակարդակով:

Այսօր եւս ըլլալով ականատես եւ ականջալուր ամէն կողմէ բարձրացող ատելութեան, անհանդուրժողականութեան, մեզմէ տարբերը մերժելու, արհամարհելու եւ ստորնացնելու խօսքին ու գործելաոճին, ստիպուած հարց կու տանք, մենք լիբանանցիներս՝ արդեօք դասեր քաղած ենք մեզի վիճակուած տառապանքներու եւ փորձութիւններու գողգոթայէն:

Պատասխանը կը ստանաք, մեր ապրած իրականութեան վրայ հայեացք մը նետելով...:

14 Ապրիլ 2019



Կարելորելով դրամատնային հաշիւներու գաղտնիութեան վերաբերեալ գործող օրէնքին մէջ լրացումներ կատարելու նախագիծի կարելորութիւնը, քուէարկեցի արագացուած կարգով անոր ընդունման ի նպաստ:

Նպատակադրած էի առաջարկ ներկայացնել, որպէսզի նոր կարգաւորումներուն մէջ ընդգրկուի նաեւ, այլ անհատներու կամ շրջանակներու դրամատան կասկածելի հաշիւները քողարկելու դերով հաւանաբար հանդէս եկող երրորդ անձանց նկատմամբ վերահսկողութիւն հաստատելու պայմանը, նաեւ՝ լիբանանեան կուսակցութիւններու ֆինանսական աղբիւրներու նկատմամբ վերահսկողութիւն կիրառելու անհրաժեշտութիւնը, բայց՝ այս կէտերուն կ'անդրադառնամ կառավարման եւ դատաիրաւական հարցերու մնայուն յանձնաժողովի յաջորդ նիստին:



Խորհրդարանական նիստի ընթացքին, առաջարկեցի ամբողջութեամբ չեղարկել նախկին նախագահներու եւ երեսփոխաններու յատկացուած կենսաթոշակները, եւ կիսով չափ զեղչել գործող նախագահներու, նախարարներու եւ երեսփոխաններու աշխատավարձը, որպէսզի սեփական օրինակով ապացուցուի պետական ծախսերու կրճատման ուղղուած միջոցառումներուն պետական այրերու մասնակցութեան անհրաժեշտութիւնը, զգուշացնելով կառավարողները համեստ խաւի եկամուտները նուազեցնելու փորձութենէն, որովհետեւ այդ պարագային՝ պիտի պարտաւորուինք մէկ վայրկեան լռութեամբ յարգել Լիբանանի պետականութեան վախճանը:

Սակաւաթիւ այլ երեսփոխաններու հետ փորձ կատարեցինք, պետական վերահսկողութեան եւ մրցոյթներու կառավարման օրէնքին հաղորդել յաւելեալ վարկ եւ թափանցիկութիւն, բայց՝ դժբախտաբար, կուսակցական շահերը եւ նկատառումները գերակշռեցին օրէնսդրութիւնը եւ սահմանադրութիւնը, տուեալ օրէնքի մէջ միայն ձեւական եւ աննշան փոփոխութիւններ կատարելու հնարաւորութիւն ընձեռնելով օրէնսդիր մարմինին:

Երեսփոխաններու մեծամասնութիւնը համաձայն չեղաւ արագացուած ընթացակարգով քննարկել աղբերու տեսակագուման եւ վերամշակման օրինագիծը, ցուցաբերելով յանցաւոր անտարբերութիւն այս հարցի վերաբերեալ, որ ոչ միայն շրջակայ միջավայրի եւ կենսոլորտի մաքրութեան ու հասարակութեան առողջապահութեան խնդիր է, այլ նաեւ պետական ծախսերու խնայման, որովհետեւ փոխան կուտակման եւ թաղման գործողութեան, աղբերու խելամիտ եւ ժամանակակից արհեստագիտական հնարաւորութիւններով կառավարումը, կրնայ ելեկտրական հոսանքի արտադրութեան կարելոր միջոց հանդիսանալ եւ երկիրը ապահովել ուժանիւթի կենսական աղբիւրով:

18 Ապրիլ 2019



22 Ապրիլ 2019-ի առաւօտեան ժամը 10:30-ին, ելոյթ ունենալով New TV հեռուստաընկերութեան, հաղորդավարուի Քաթրին Հաննայի հեղինակային հաղորդումը հանդիսացող «Իրադարձութիւն» ծրագիրէն, երեսփոխանուի Փոլա Եագուպեան յայտարարեց, թէ իր համոզումով, ամենամեծ գայթակղութիւնը որ Լիբանանի պետականութեան պատմութեան մէջ մինչ այս պահը արձանագրուած է, կը վերաբերի ելեկտրական հոսանքի թղթածրարին, որուն հետ առնչութիւն ունեցողներու եւ վերջին տասնամեակին ոլորտի պատասխանատուութիւնը ստանձնողներու դրսեւորած անարդիւնաւէտութիւնը, եւ անոնց խնդիրի լուծման համար գործնական ու շահաւէտ բանաձեւ մը առաջադրելու եւ իրականացնելու անկարողութիւնը ոչ մէկ ձեւով արդարացուած է, եւ համոզիչ չէ նաեւ իբր իրենց աշխատանքը խոչընդոտողներու առկայութեան մասին անոնց պնդումները, որովհետեւ, եթէ իսկապէս նմաններ կային, անոնք պէտք էր ատենին բացայայտէին եւ ներկայացնէին հանրութեան:



Տիկին երեսփոխանուիին նկատել տուաւ, որ ժողովուրդը պէտք է դրսեւորէ, իշխանաւորներու սխալ գործելաոճը ժողովրդավարական խաղաղ միջոցներով ուղղելու, այսինքն՝ ընտրական գործընթացով սրբագրելու գիտակցութիւն եւ կամք:

Ակնարկելով խորհրդարանի նիստերու ընթացքին քուէարկութեան ընթացակարգին առնչուող խնդիրներուն, Փոլա Եագուպեան նշեց, որ այն քառասյին իրավիճակ մը կը պարզէ, եւ անհրաժեշտ համարեց, որ հասարակութիւնը իրազեկ դառնայ, որ իր քուէով ընտրուած եւ զինք ներկայացնող իւրաքանչիւր երեսփոխան, տարբեր օրինագիծերու եւ օրէնսդրական նախաձեռնութիւններու վերաբերեալ քուէարկութիւն-

Ճարուևակոււած Էջ 5-Էն

ներու ընթացքին, ի՞նչ տրամաբանութեամբ, ի՞նչ հիմնաւորմամբ, եւ ի՞նչ ձեւով կը գործածէ իրեն վերապահուած քուէի իրաւունքը:

Երեսփոխանուհին անդրադարձաւ նաեւ խորհրդարանական իր մէկ տարուան գործունէութեան ընթացքին ձեռնարկած քայլերուն եւ մատնանշեց, որ տուեալ ժամանակաշրջանին, երեսուն օրէնսդրական նախաձեռնութիւններով հանդէս եկած է, որ մնացեալ բոլոր երեսփոխաններուն կողմէ դրսեւորուած օրէնսդրական նախաձեռնութիւններու հանրագումարին գրեթէ կէսն է:

Ան տեղեկացուց, որ Ազգային Ազատ Հոսանքի խորհրդարանական խմբաւորման ներկայացուցած, դրամատնային կասկածելի հաշիւներու գաղտնիութեան վերացման եւ դրամներու լուացման գործողութիւններուն դէմ պայքարի օրինագիծին կողմ քուէարկած է, բայց անոնք մերժած են քուէարկել իր կողմէ առաջադրուած, վերամշակման նպատակով աղբերու յառաջացման աղբիւրներէն պարտադիր տեսակազտում նախատեսող օրինագիծին ի նպաստ:

Խորհրդարանի մէջ ելեկտրոնային քուէարկութեան համակարգի ներդրման կապակցութեամբ երեսփոխանուհին դիտել տուաւ, որ այդ առումով անհրաժեշտ է նախաձեռնել կանոնադրական փոփոխութիւն մը, որուն վերաբերեալ տարբեր խմբաւորումներու միջեւ փոխհամաձայնութեան մը հնարաւորութիւնը ներկայիս կը թուի անհաւանական:

Ան եզրափակելով իր ելոյթը տեղեկացուց, որ այժմ նախապատրաստական աշխատանքներ կը տարուին, հպատակութեան նոր օրէնքի մը լրամշակման վերաբերեալ:

22 Ապրիլ 2019



Հայոց Ցեղասպանութեան 104-րդ տարելիցին առթիւ, երեսփոխանուհի Փոլա Եագուպեան՝ 24 Ապրիլին այցելեց Անթիլիասի մայրավանքի Սրբոց Նահատակաց յուշարձան-մատուռ, նահատակաց յիշատակին իր յարգանքի տուրքը մատուցելու համար:



Երեսփոխանուհին իրեն ընկերակցող պատուիրակութեան հետ, վեհարանին մէջ հանդիպեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, որուն հետ զրուցեց համայնքային եւ ազգային խնդիրներուն շուրջ:

Իսկ 23 Ապրիլի երեկոյեան, երեսփոխանուհին ներկայ եղաւ եւ իր սրտի խօսքը փոխանցեց, Միխայիլեան Միաբանութեան կողմէ Հազմիէի դպրեվանքին մէջ կազմակերպուած Սուրբ Նահատակաց յիշատակի հանդիսութեան եւ հայր Մեսրոպ Օ. Կրդ. Սուլահեանի հանդիսապետութեամբ մատուցուած Սուրբ Պատարագի արարողութեան:



Հանդիսութեան ներկայ էր նաեւ Լիբանանի կառավարութեան ընկերային հարցերու նախարար Ռիշար Գոյումձեան:

25 Ապրիլ 2019



Որպէսզի օրեր առաջ դրամատնային կասկածելի հաշիւներու գաղտնիութեան վերացման վերաբերեալ Ազգային Ազատ Հոսանքի կողմէ առաջադրուած օրէնքի նախագիծը – որուն ի դէպ կողմ քուէար-

կած էի – իր որոշ դրոյթներու յստակեցման եւ ամբողջացման, եւ նախագիծի յաւելեալ լրամշակման միջոցաւ դառնայ աւելի ներգործօն եւ արդիւնաւէտ, Լիբանանի Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Սամի Շըմայելի հետ համատեղ, արագացուած կարգով ներկայացուցինք նոր օրէնքի նախագիծ մը, որ կը նախատեսէ օրէնքի պահանջները կիրառել եւ տարածել հասարակական-քաղաքական բոլոր կառոյցներու ղեկավարներուն, անոնց ընտանիքի անդամներուն եւ մերձաւոր ազգականներուն, պետական հաստատութիւններէն ներս բարձր դիրքեր զբաղեցնող պաշտօնեաներուն, պետութեան հետ գործառնութիւններու մէջ գտնուող ձեռնարկատէրերուն եւ պետական պատուէրներ իրականացնող կապալառուներուն վրայ:



Մասնաւորապէս՝ օրէնքի նախագիծի մեր ներկայացուցած տարբերակը կը նախատեսէ օրէնսդրական լրջագոյն եւ արմատական կարգաւորումներ, հաւանական գեղծարարութիւնները եւ խարդախութիւնները կանխելու եւ երրորդ անձերու ներգրամամբ յանցաւոր ճանապարհով ձեռք բերուած գումարներու քողարկման միտուած հնարաւոր բոլոր մեքենայութիւններու բացառումը կամ փաստացի բացայայտումը երաշխաւորելու համար:

Նոյն ատեն, Սամի Շըմայելի հետ ընդգծեցինք, աղբերու տեսակազտման եւ վերամշակման գործողութիւններու վերաբերեալ հասարակական իրազեկութեան բարձրացման եւ տարածման անհրաժեշտութիւնը, որովհետեւ այդ կերպ կրնանք պակսեցնել արտադրուած աղբերու եւ աղբահաւաքման աշխատանքներու ծաւալը, պետութեան խնայելով դրամական լուրջ միջոցներ, որուն մասին վերջերս պետական այրեր օրնիբուն կը յայտարարեն:

26 Ապրիլ 2019



Անձիս դէմ նախարար Շըպրան Պասիլի կողմէ Մեթնի շրջանի ելեւմտական հարցերով առաջին ատենանի մօտ ներկայացուած դատական հայցի նախաքննութեան ծիրէն ներս, անոր կողմէ առաջադրուած փաստարկներուն որպէս պատասխան, իրաւաբանական հարցերով իմ լիազօր ներկայացուցիչ փաստաբան Լուէյ Ղանտուրի միջոցաւ ներկայացուցի իմ հակափաստարկներու ցանկը, ուր կը պահանջուի գործով որպէս վկայ ներգրաւել Խորհրդարանի նախագահ Նապիհ Պըրրին, նախկին վարչապետներ Ֆուատ Սինիորան եւ Նաժիպ Միքաթին, նախկին փոխ վարչապետ զօրավար Իսամ Ապու ժամրան, Լիբանանեան Ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր ժահժահը, Մարատա Հոսանքի նախագահ Սլէյման Ֆրանժիյէն, զօրավար Աշրաֆ Ռիֆին, նախարարներ եւ երեսփոխաններ՝ Ալի Հասան Խալիլը, ժամալ Ալ-ժարահը, Հատի Հըպէյը, Սամի Շըմայելը, Ղազի Եուսըֆը, Մուհամատ Ապտուլհամիտ Պայտունը, Ֆարիտ Հայքալ Ալ-Խազընը, Անուար Խալիլը, Եասին ժապըրը, Ուիլամ Ուահապը, Զիատ Հաուաթը, Պուրոս Հարպը եւ ուրիշներ:

Որպէսզի անոնց ցուցմունքներով հիմնաւորուի եւ փաստուի, ելեկտրական հոսանք արտադրող թրքական նաւերու գայթակղութեան՝ նախարար Շըպրան Պասիլի առնչութեան վաւերականութիւնը, եւ ապացուցուի, որ ընկերային ցանցերու վրայ երեւցած մտացածին որոշ հաղորդումներուն յղում կատարելով, տուեալ խնդիրին կապակցութեամբ վերոնշեալներու տարբեր առիթներով իր հասցէին հնչեցուցած մեղադրանքները կամ ակնարկները հերքելու իր անյոյս փորձերը ամբողջութեամբ ապարդիւն են եւ չեն կրնար քողարկել կամ աղաւաղել ճշմարտութիւնը:

3 Մայիս 2019



Երեսփոխանուհի Փոլա Եագուպեանի դէմ, հիւանդ երեւակայութեամբ տառապող յայտնի շրջանակներու կողմէ կազմակերպուած վարկաբեկման արշաւը կը շարունակուի անընդհատ եւ օրըստօրէ նոր թափ կը հաւաքէ:

مبلغ المصروف	رقم التحويل	الوحد	المبلغ المتبقي
2018	27713	4	543,000
2019	01	01	543,000
2019	14	02	50,000
2019	15	03	90,000
2019	16	04	10,000
2019	17	05	150,000
2019	18	06	593,000
2019	19	07	593,000
2019	20	08	593,000
2019	21	09	593,000
2019	22	10	593,000
2019	23	11	593,000
2019	24	12	593,000
2019	25	13	593,000
2019	26	14	593,000
2019	27	15	593,000
2019	28	16	593,000
2019	29	17	593,000
2019	30	18	593,000
2019	31	19	593,000
2019	32	20	593,000
2019	33	21	593,000
2019	34	22	593,000
2019	35	23	593,000
2019	36	24	593,000
2019	37	25	593,000
2019	38	26	593,000
2019	39	27	593,000
2019	40	28	593,000
2019	41	29	593,000
2019	42	30	593,000
2019	43	31	593,000
2019	44	32	593,000
2019	45	33	593,000
2019	46	34	593,000
2019	47	35	593,000
2019	48	36	593,000
2019	49	37	593,000
2019	50	38	593,000
2019	51	39	593,000
2019	52	40	593,000
2019	53	41	593,000
2019	54	42	593,000
2019	55	43	593,000
2019	56	44	593,000
2019	57	45	593,000
2019	58	46	593,000
2019	59	47	593,000
2019	60	48	593,000
2019	61	49	593,000
2019	62	50	593,000
2019	63	51	593,000
2019	64	52	593,000
2019	65	53	593,000
2019	66	54	593,000
2019	67	55	593,000
2019	68	56	593,000
2019	69	57	593,000
2019	70	58	593,000
2019	71	59	593,000
2019	72	60	593,000
2019	73	61	593,000
2019	74	62	593,000
2019	75	63	593,000
2019	76	64	593,000
2019	77	65	593,000
2019	78	66	593,000
2019	79	67	593,000
2019	80	68	593,000
2019	81	69	593,000
2019	82	70	593,000
2019	83	71	593,000
2019	84	72	593,000
2019	85	73	593,000
2019	86	74	593,000
2019	87	75	593,000
2019	88	76	593,000
2019	89	77	593,000
2019	90	78	593,000
2019	91	79	593,000
2019	92	80	593,000
2019	93	81	593,000
2019	94	82	593,000
2019	95	83	593,000
2019	96	84	593,000
2019	97	85	593,000
2019	98	86	593,000
2019	99	87	593,000
2019	100	88	593,000
2019	101	89	593,000
2019	102	90	593,000
2019	103	91	593,000
2019	104	92	593,000
2019	105	93	593,000
2019	106	94	593,000
2019	107	95	593,000
2019	108	96	593,000
2019	109	97	593,000
2019	110	98	593,000
2019	111	99	593,000
2019	112	100	593,000
2019	113	101	593,000
2019	114	102	593,000
2019	115	103	593,000
2019	116	104	593,000
2019	117	105	593,000
2019	118	106	593,000
2019	119	107	593,000
2019	120	108	593,000
2019	121	109	593,000
2019	122	110	593,000
2019	123	111	593,000
2019	124	112	593,000
2019	125	113	593,000
2019	126	114	593,000
2019	127	115	593,000
2019	128	116	593,000
2019	129	117	593,000
2019	130	118	593,000
2019	131	119	593,000
2019	132	120	593,000
2019	133	121	593,000
2019	134	122	593,000
2019	135	123	593,000
2019	136	124	593,000
2019	137	125	593,000
2019	138	126	593,000
2019	139	127	593,000
2019	140	128	593,000
2019	141	129	593,000
2019	142	130	593,000
2019	143	131	593,000
2019	144	132	593,000
2019	145	133	593,000
2019	146	134	593,000
2019	147	135	593,000
2019	148	136	593,000
2019	149	137	593,000
2019	150	138	593,000
2019	151	139	593,000
2019	152	140	593,000
2019	153	141	593,000
2019	154	142	593,000
2019	155	143	593,000
2019	156	144	593,000
2019	157	145	593,000
2019	158	146	593,000
2019	159	147	593,000
2019	160	148	593,000
2019	161	149	593,000
2019	162	150	593,000
2019	163	151	593,000
2019	164	152	593,000
2019	165	153	593,000
2019	166	154	593,000
2019	167	155	593,000
2019	168	156	593,000
2019	169	157	593,000
2019	170	158	593,000
2019	171	159	593,000
2019	172	160	593,000
2019	173	161	593,000
2019	174	162	593,000
2019	175	163	593,000
2019	176	164	593,000
2019	177	165	593,000
2019	178	166	593,000
2019	179	167	593,000
2019	180	168	593,000
2019	181	169	593,000
2019	182	170	593,000
2019	183	171	593,000
2019	184	172	593,000
2019	185	173	593,000
2019	186	174	593,000
2019	187	175	593,000
2019	188	176	593,000
2019	189	177	593,000
2019	190	178	593,000
2019	191	179	593,000
2019	192	180	593,000
2019	193	181	593,000
2019	194	182	593,000
2019	195	183	593,000
2019	196	184	593,000
2019	197	185	593,000
2019	198	186	593,000
2019	199	187	593,000
2019	200	188	593,000
2019	201	189	593,000
2019	202	190	593,000
2019	203	191	593,000
2019	204	192	593,000
2019	205	193	593,000
2019	206	194	593,000
2019	207	195	593,000
2019	208	196	593,000
2019	209	197	593,000
2019	210	198	593,000
2019	211	199	593,000
2019	212	200	593,000
2019	213	201	593,000
2019	214	202	593,000
2019	215	203	593,000
2019	216	204	593,000
2019	217	205	593,000
2019	218	206	593,000
2019	219	207	593,000
2019	220	208	593,000
2019	221	209	593,000
2019	222	210	593,000
2019	223	211	593,000
2019	224	212	593,000
2019	225	213	593,000
2019	226	214	593,000
2019	227	215	593,000
2019	228	216	593,000
2019	229	217	593,000
2019	230	218	593,000
2019	231	219	593,000
2019	232	220	593,000
2019	233	221	593,000
2019	234	222	593,000
2019	235	223	593,000
2019	236	224	593,000
2019	237	225	593,000
2019	238	226	593,000
2019	239	227	593,000
2019	240	228	593,000
2019	241	229	593,000
2019	242	230	593,000
2019	243	231	593,000
2019	244	232	593,000
2019	245	233	593,000
2019	246	234	593,000
2019	247	235	593,000
2019	248	236	593,000
2019	249	237	593,000
2019	250	238	593,000
2019	251	239	593,000
2019	252	240	593,000
2019	253	241	593,000
2019	254	242	593,000
2019	255	243	593,000
2019	256	244	593,000
2019	257	245	593,000
2019	258	246	593,000
2019	259	247	593,000
2019	260	248	593,000
2019	261	249	593,000
2019	262	250	593,000
2019	263	251	593,000

عام في مجلس النواب

كرّس الدستور اللبناني مبدأ فصل السلطات، وأكد أن الشعب هو مصدرها وصاحب السيادة، يمارسها من خلال ممثلين له كان لي شرف أن أكون واحدة منهم في الانتخابات النيابية الأخيرة في شهر أيار الفائت، فأتملت بذلك سنتي الأولى في المجلس. ولأن النائب مسؤول أمام ناخبيه الذين يحق لهم مراقبة عمله، أعرض أدناه بعض ما قمت به خلال السنة المنصرمة حرصاً مني على الشفافية والمسؤولية، وتأكيذاً على أن ما قمت به كله، لا يندرج إلا تحت بند "مصلحة الناس" فقط وليس مصالح أي قوى داخلية أو خارجية أو قوى ضغط أو جهات نافذة أو أحزاب السلطة.

التشريع هو الوظيفة الأساسية التي يمارسها النائب داخل المجلس، فيتجلى دوره التشريعي بصلاحيه اقتراح القوانين، لذلك تقدمت بـ 30 اقتراح قانون وبمجموعة من الأسئلة المكتوبة والشفوية وجهتها للحكومة خلال مشاركتي بالجلسات التشريعية العامة كلها، إضافة الى جلسات اللجان النيابية، والنشاطات المتفرقة التي تدعم حقوق المواطنين في مجال الحريات وحقوق الانسان والأمن البيئي والمعيشي، كما أن مكتبي الانتخابي أبقىته مفتوحاً على مدار هذا العام للاستماع الى شكاوى الناس ومطالبهم. أما اقتراحات القوانين الـ 30 فهي:

1. قانون ضريبة الدخل .
2. قانون تعديل نظام الموظفين.
3. قانون تجريم التدخل في أعمال القضاة.
4. قانون تعديل المادة ٤٩٥ من قانون العقوبات.
5. قانون انشاء الصندوق الوطني للأمراض المستعصية.
6. قانون تعديل المادة ٣٣٠ من قانون الجمارك بهدف وضع ضوابط موضوعية تحدد ما يُصيب كل موظف من اموال وتحقق العدالة بين الموظفي في عملية توزيعها.
7. قانون آدم - تعديل بعض أحكام قانون القضاء العسكري.
8. قانون مجانية والزامية التعليم.
9. قانون الزامية فرز النفايات في المصدر التي تقتلنا بشكل بطيء وتتسبب بالأوبئة والأمراض من دون ان تتمكن الحكومة حتى تاريخه من ايجاد حل فعال لاجئة الى خيار المحارق التي أثبتنا في أكثر من مناسبة أنها كارثة على صحة المواطنين.
10. قانون تخفيض رسوم رخص سوق الدرجات النارية التي تعد وسيلة لتثقل الفقراء بسبب غياب وسائل النقل العام بشكل شبه كلي.
11. قانون إنشاء المجلس الاقتصادي والاجتماعي.
12. قانون تسهيل اجراءات المحاكمة في قضايا مكتومي القيد.
13. قانون استبدال التسمية بـ"الطوائف اليهودية".
14. قانون إنشاء مصلحة النقل المشترك.
15. اقتراح تعديل قانون "تنظيم مهنة المحاماة".
16. تعديل قانون "الصيد البري".
17. قانون إلغاء استعمال القوة ودخول المنازل في قضايا تسليم الأطفال.
18. قانون تعديل مواد في قانون مكافحة العنف الأسري والعنف ضد المرأة.
19. قانون الغاء حبس الام اكراميا في حال امتناعها عن تسليم ولدها.
20. قانون جزاء التغيب عن الجلسات التشريعية.
21. قانون مخصصات الرؤساء والنواب الحاليين.
22. قانون مخصصات الرؤساء والنواب السابقين المثيرين للجدل عشية اقرار الموازنة وحديث السلطة عن مكافحة الفساد.
23. قانون القضاء على كل أشكال التمييز ضد المرأة.
24. قانون استقلالية القضاء وشفافيته.
25. قانون تنظيم زراعة القنب.
26. قانون منع استيراد الأجهزة الالكترونية المستعملة، بغية الحفاظ على البيئة.
27. قانون أزمة الإسكان.
28. قانون إلغاء الألقاب العثمانية والفرنسية.
29. قانون منح النائب الصفة لطلب إبطال الأعمال الادارية.
30. اعادة تقديم اقتراح قانون السرية المصرفية المقدم من "التيار الوطني الحر" بعد اضافة تعديلات وتحسينات تضمن تطبيقه بشكل جيد.



الاقتراحات موجودة على الموقع الالكتروني <https://paulayacoubian.com> :
أما الأسئلة التي تقدمت بها الى المجلس النيابي فهي: 1. سؤال عن تلوث الشاطئ اللبناني كاملاً بسبب رمي النفايات في البحر 2. سؤال عن توظيف أكثر من 5000 شخص خلافاً للقانون 3. سؤال عن عقود الاتفاق بالتراضي بين بلدية بيروت وشركة الاعلام والاعلان - Noise.4

سؤال عن أسباب رفع بدل اشتراك المياه ومبرراته، 5. سؤال عن رفع الحد الأدنى للرواتب والأجور واعطاء زيادة غلاء معيشة في مصلحة سكك الحديد.

أما النشاطات، فكان على رأسها الزيارات المباحثة التي قمت بها الى مطامر النفايات في برج حمود والكوستا برافا ومعامل الفرز التسبيخ والتي مكنتنا من كشف المخالفات، والتقدم بدعوى ضد متعهد المطمر ومجلس الانماء والاعمار، والقضية باتت أمام مدعي عام جبل لبنان القاضي



غادة عون.

وكذلك واكبت قضايا الحريات، وقضايا المرأة والعنف الأسري، ورفعت الصوت للتضامن مع النائية الكردية ليلي غوفين التي كانت تضرب عن الطعام بسبب اعتقالها سياسياً من قبل السلطات التركية.

وساندت أهالي منطقة الـ"سان سيمون" لإزالة مجرور الايدن باي عنهم ولاعادة المياه اليهم، اضافة الى متابعة الأعمال الخاصة بتجميل أقسام بالعقارات في منطقتي الكرنيتينا ومار مخايل في إطار تحسين مدخل بيروت الشمالي (العمل في المشروع مستمر).

رافقت الناجحين بمباريات مجلس الخدمة المدنية، وتابعت قضية المتقدمين الى دورة الجمارك. في الشأن البيئي، شاركت في حراك التصدي لانشاء محرقة للنفايات في بيروت منذ اليوم الأول، وكان لحراكنا دور كبير في توعية الناس على مخاطرها.

شاركت أيضاً بحملات لتنظيف الشاطئ اللبناني، وكذلك بحملة لتنظيف قعر البحر، اضافة الى اطلاق حملات عدة تُعنى بالتوعية على أهمية فرز النفايات، وفي الاطار نفسه تابعت الاجراءات المتخذة للحد من تلوث نهر الليطاني، وطبعا التصدي للصفقات المشبوهة وأبرزها صفقة بواخر الكهرباء، وخوض المواجهة مع الاهالي للتصدي لانشاء سد بسري.

في المجال الانساني أيضاً، استمررت بالعمل ضمن حملة "دفي" التي نجحت بتوفير الحاجات الاساسية لعشرات آلاف الفقراء وهي حملة مستمرة منذ سنوات، اضافة الى تنظيم وتلبية دعوات لحضور ندوات في الداخل والخارج حول حقوق الانسان.

وفي موضوع الطعون النيابية، فقد حاولت التقدم بطعنين لكنني للأسف لم أتمكن من اقناع 10 نواب من زملائي لينضموا إلي، وقد نجحنا اخيراً بتقديم طعن في خطة الكهرباء، طعن جهاز حزب "الكتائب اللبنانية"، لا يوقف الخطة إنما يلزم تنفيذها بالتقيد بالقوانين. كما تابعت عن كثب موضوع الطعون بنتائج الانتخابات في اكثر من دائرة وبخاصة في الاشرفية حيث كان من المفترض ان ينصف المجلس الدستوري جوماناً حداد ويثبت نيابته. أما في ملف التصدي للفساد، فقد أظهرت للرأي العام من يقف خلف التوظيفات العشوائية وكيف تدار عملية النهب المنظم لمقدرات البلد، فانطلقت حملات مغرضة منظمة من المافيا الحاكمة ومناصريها.

قضائياً، تقدمت بإخبار بعد اعتراف وزير الخارجية جبران باسيل بوجود عمالات وسمسرات في بواخر الكهرباء والاتصالات والمرافق والتلزيما، فرفض الوزير الرد على القضاء، لا بل كان رده عبارة عن دعوى قضائية ضدي بعد مقابلة تلفزيونية تحدثت خلالها عن معلومات تؤكد شراكة في عمليات البواخر بينه وبين نادر الحريري، فطلبت تعيين خبير للتدقيق بالوثائق المبرزة بغية تحديد قيمة العمولات المدفوعة في صفقات البواخر وإلزام من قبضها باعادتها إلى الخزينة.

تقدمت بعد فضيحة مجرور الايدن باي بإخبار مع نواب بيروت، هذا الاخبار ما زلت الاحقه حتى اليوم واتصل لأسأل عن التحقيقات التي من الواضح ان هنالك من يحاول تمييعها ويطلب تنحي القاضي، ومن الواضح ان رؤوسا كبيرة تواطت وقبضت وغطت هذا الجرم. تمكنت أيضاً من إيقاف كاسر الموج للمشروع نفسه، هذا الكاسر الذي لو نفذ لكان منع وصول الرمل الأبيض الى شاطئ الرملة البيضاء

كل ما سبق ذكره كان وسيبقى موجها لتحقيق المصلحة العامة وليعود بالنفع على اللبنانيين كافة، وكان مرات كثيرة موجهاً، عن قصد او غير قصد، ضد السلطة التي لم توفر فرصة ومناسبة لمحاربتني، أكان من خلال إقامة الدعوى او شن الحملات غير المسبوقة التي تطالني كل يوم في الشخصي، بهدف تشويه سمعتي وصورتني وضرب مصداقيتي أمام من أولاني ثقته. هذا جزء مما قمت به نائبة وحيدة انتمي الى تحالف وطني يرفض منظومة السلطة الفاسدة التي تنقاسم المغالمة وتنقاذ المسؤولين... أعدكم بأنني مستمرة بالعمل لمصلحة اللبنانيين شعباً واحداً.

بولاً يعقوبيان